զատ՝ կան նաեւ երեք տանուտէրեր, որոնք ընտրւում են բոլորովին այլ կարգով եւ այլ նպատակների համար։ Բայց այդ մասին քիչ յետոյ։

Ազգային ժողովն ունի մէկ արտասովոր եւ միեւնոյն ժամանակ նաեւ պատուոյ պաշտօն եւս, որի տէրը կոչւում է «Հայր Հայաստանեաց» կամ հայրենախնամ ծնող իշխանութեան տանն հայոց» (լէ, լզ, խ)։ Ընտրւում է մի հոգի, վիճակով, բոլոր պատգամաւորների մէջից եւ միայն երեք օր ժամանակով։ Նրա պարտականութիւնը — կամ աւելի ճիշդ — իրաւունքն է՝ պատգամաւորների միջից, իր հայեցողութեամբ ընտրել վերոյիշեալ երեք տանուտէրերին, նշանակել նրանց աստիճանները (առաջին, երկրորդ, երրորդ), երդուեցընել նրանց եւ յատուկ թղթով իշխանութիւն տալ նրանց՝ ազգային ժողովի դիւանը կամ դիւանի նման մէկ հաւաքական մարմին կազմելու։

Եւ որովհետեւ այդ երրորդութիւնը իրապէս իր մէջ ամփոփում է ազգային ժողովը, հետեւապէս իր մէջ ամփոփում է նաեւ ազգի բոլոր վերհսկողական իրաւունքները — եւ նրանից են բղխում երկրի բոլոր իշխանութիւնները, ուստի իրաւամբ այդ երրորդութիւնը կեանքի կոչող անձնաւորութիւնը կոչւում է «Հայր Հայաստանեաց» կամ «Հայրախնամ ծնող իշխանութեան տանն հայոց» (խգ)։

Այդ երեք տանուտէրերը, իրենց նոյնանման կարգով, բռնում են ազգային ժողովում իրենց երկրորդ, երրորդ եւ չորրորդ աթոռները, Հանրապետութեան նախագահից յետոյ։ Հարկաւոր դէպքում նրանք կարող են իրենց թիւն աւելացնել (խե)։ Երեքից առաջինը միշտ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչն է (մլգ)։

Պէտք է արձանագրել, որ ընդհանրապէս չափազանց անորոշ են ձեւակերպուած նրանց իրաւունքներն ու պարտականութիւնները, յաճախ նաեւ իրար հակասող յօդուածներով։ Սակայն այդ ընդհանուր անորոշութեան միջից այնուամենայնիւ կարելի է մակաբերել, որ նրանք իշխանութիւն ունեն —

1. Մասնակցել ազգային ժողովի բոլոր աշխատանքներին, որպէս նրա դիւանը.

2. Յետ ստանալ Հայր Հայաստանեացից վերջնիս պաշտօնատարութեան թուղթը.

3. Հետեւել ազգային ժողովից ելած օրէնքների ու կարգադրութիւնների գործադրութեանը.

4. Պաշտօնների թուղթ կամ նամակ (հրովարտակ) տալ ազգ. ժողովից ընտրուած բոլոր պաշտօնեաներին, սկսած Հանրապետութեան նախագահից (խգ)։

Զմոռանանք նկատել, որ մի յատուկ օրէնքով (խզ) մինչեւ իսկ նրանց իրաւունք է տրւում բոլոր պաշտօնները — բացի Հանրապետութեան նախագահի պաշտօնից — կարգադրելու եւ բաշխելու, առանց ազգ. ժողովի որոշման։ Թէեւ անմիջապէս նրան հետեւում է մէկ ուրիշ յօդուած, որով սահմանափակւում է այդ իրաւունքը յօդուտ ազգ ժողովի. «Պաշտօն նախարարութեան1), ծայրագոյն դատաւորութեան, ասպետութեան եւ սպարապետութեան պարտ է ելանել ի տանէ հայոց եւ ի բերանէ բոլոր տանուտէրաց» (խէ)։

Յամենայն դէպս պարզ է, որ երեք տանուտէրերի կոլլեգիան — ըստ Շահամիրեանի — հանդիսանում է երկրի իշխանութեան անմիջական աղբիւրը — ի դիմաց ազգ. ժողովի եւ բոլոր թղթերը ազգ. ժողովից դուրս են գալիս այդ երեքի ստորագրութեամբ։

Բայց թէ ի՛նչ ձեւով է տանում նա իր գործավարութիւնը — այս մասին ոչ մի օրէնք. միայն մէկ բան շատ որոշ շեշտուած է, այն, որ նրա տուած թղթերի վրայ, երեքի ստորագրութիւնների հետ միասին, անպայմանօրէն պիտի լինի նաեւ դծագրի — կամ մեր լեզուով եթէ ասենք՝ քարտուղարի — ստորագրութիւնը (խզ), իսկ շատ կարեւոր թղթերում — ինչպէս օրինակ՝ Հանրապետութեան նախագահի, ծայրագոյն դատաւորների, սպարապետութեան եւ ասպետութեան հրովարտակների վրայ — նաեւ հայոց տան կնիքը (խէ)։

Օրէնսդրութեան կարգը ազգ. ժողովում, որ նոյնպէս չափազանց անորոշ է եւ խառնի խուռն, մօտաւորապէս հետեւեալ ձեւով է սահմանուած. իւրաքանչիւր օրինագիծ նախ-

1) «Նախարար» է կոչում Հանրապետութեան նախագահին։